«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

ՀՔ-16-12/04

14.01.2017թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Պրն. Հարություն Սարգսյանին

Հարգելի՛ պրն. Սարգսյան

«Հետք» էլեկտրոնային թերթը մի քանի մարզերում ուսումնասիրել է 2006-2015թթ. դպրոցաշինության ծրագրերը, այդ թվում նաև Վայոց ձորի մարզում կատարված աշխատանքները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Վայոց ձորի դպրոցներում կատարված շինարարական աշխատանքները երբևէ ուսումնասիրվել են մարզպետարանի կողմից: Եթե այո, ապա հայտնաբերվե՞լ են թերություններ, ի՞նչ քայլեր են ձեռնարկվել:

2. Մարզպետարանը քննարկման առարկա դարձրե՞լ է «Հետքի»՝ Վայոց ձորի մարզի դպրոցների վերաբերյալ հրապարակումը:

3. 2006-2008թթ. ընթացքում 4 անգամ վերանորոգված Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցը տնօրենի խոսքերով գնահատվել է որպես քանդման ենթակա վթարային շինություն: Ի՞նչ փուլում է դպրոցի նոր շենքի կառուցման հարցը:

Վայոց ձորի դպրոցների մասին պատմող նյութը հրապարակվել է 2016թ. հուլիսի 23-ին: Այն կարող եք տեսնել հետևյալ հղմամբ՝ http://hetq.am/arm/multimedia/videos/312/

Հարգանքով՝

«Հետաքննող լրագրողներ» հ/կ
նախագահ,
«Հետք» թերթի գլխ. խմբագիր
Է. Բաղդասարյան

16 01 2017

Հարգելի՛ պրն. Սարգսյան

«Հետք» էլեկտրոնային թերթը մի քանի մարզերում ուսումնասիրել է 2006-2015թթ. դպրոցաշինության ծրագրերը, այդ թվում նաև Վայոց ձորի մարզում կատարված աշխատանքները:

Սույնով խնդրում ենք Ձեզ պատասխանել կից հարցմանը:

Հարգանքով՝

Մարիամ Չախոյան

«Հետք» թերթի լրագրող

ք. Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ
Հեռ. 010-56-33-63